առնեն ամեն բան։ Վայ հասարակութեան աղքատ դասին. հարուստը դեռ կարող է իր պարէնը պատրաստել, իսկ դա՞ ինչ անէ։ Սրա վրա հրաւիրում ենք այն անձանց ուշադրութիւնը, որոնց պարտքն է հոգալ քաղաքի տնտեսական դրութեան վրա։

Բայց կարծում ենք, թէ այդ անկարգութիւնները կարող են վերջանալ բոլորովին միայն այն ժամանակ, երբ քաղաքն ինքնավարութիւն կը ստանայ, որից դեռ զուրկ է։

Յայտնի է, որ քաղաքի մէջ ինքնավարութիւն մտցնելու խնդիրը պարզելու համար կազմված յանձնաժողովը անա արդէն 2—3 ամիս է վերջացրել է իր գործը և դրել է, որ քաղաքային ինքնավարութիւն մտցնել Ալէքսանդրապոլում ոչ թէ անկարելի, այլ հեշտ է և հարկաւոր։ Յանձնաժողովն իր կազմած տեղեկագիրը մատուցել է, ուր հարկն է, բայց լսում ենք, որ այդ տեղեկագիրը դեռ չէ հասցրած պ. Նահանգապետին, այլ մնում է քաղաքումս մի մանաւոր անձի մօտ։ Քաղաքացիք միտք ունեն խնդիր ներկայացնել (այսօր լսեցի, որ խնդիրն արդէն պատրաստ է, բայց ուղարկած է, թէ ոչ, այդ չը գիտեմ հաստատ) պ. Նահանգապետին և խնդրել, որ ուշադրութիւն դարձնէ այս կարևոր հարցի վրա։ Քաղաքային ինքնավարութիւն ունենալու պահանջը հետզհետէ զգալի է դառնում մեզ։

Բէլական դպրոցի բացման հարցը, կարծես, քայլ առ քայլ մօտենում է իրագործման։ 7000 ռուբլ տարեկան նպաստը, որ քաղաքը չարունակ պէտք է անէ գանձարանին բէլական դպրոցի համար, արդէն պատրաստի է, մնում է եռանդագոյն փոյթ դրա մասին։

Դեռ չը վերջացրած նամակս, չեմ կարող լռութեամբ անցնել մի զէպք, որ մեծ գայթակղութեան և տխրութեան մէջ ձգեց մեր խաղաղ հասարակութեանը։ Յունիսի 16-ին Արղսութեան օրիորդական դպրոցում հարցաքննութիւն էր աշխարհագրութենից. ներկայ էին նորեկ առաջնորդական փոխանորդը, բաւականին հանդիսականներ, հոգաբարձուք և այլն։ Պէտք է ասել, որ (ինչպէս պատմում են մի քանի արժանահաւատ անձինք) օրիորդներից մի քանիսը թոյլ են պատասխանել ուսուցչի առաջարկած հարցերին, որի պատճառով տեսչի և աշխարհագրութեան ուսուցչի մէջ սաստիկ կռիւ է բացվել։

Ց.

ՆԱՄԱԿ ԿԱՐԱԿՈՒՐՏԻՑ

Յուլիսի 20

Բարեհաճեցէք տեղ տալ ձեր պատուական լրագրում այս մի քանի խօսքերին։

Թէ որքան հարկաւոր է ուշադրութիւն դարձնել երբեմն ժողովրդական բժշկական հնարքների վրա, որոնք բժշկներից շատերից արհամարհուած և մերժաքսված են գործածութիւնից, երևում է հետևեալ փաստից։

Բժիշկ Պուտելով հաղորդում է «Врачъ» շաբաթաթերթի խմբագրին՝ պրոֆեսոր Մանասէինին (№ 26. 1881), որ նրան Կովկասում և Աստրախանում պատահեց նկատել մի ժողովրդական բժշկական հնարքի զարմանալի յաջող ներգործութիւնը հասարակ և արիւնախառն թանչքում (поносъ), ինչպէս հասակաւորների, նոյնպէս և մանուկների վրա։ Այս հնարքն է զմուռ կարմիր, մանաւանդ միջին տեսակը № 2, Սաստիկ արիւնախառն թանչքը, որի վրա ոչ մի դեղ չէր ներգործում և յոյս չը կար արդէն բժշկելու, բոլորովին դադարեց տալով հիւանդից զմուռից քերված թողը մօտաւորապէս մի մի գրան երկու անգամ։ Մի և նոյն արդէն մի տարեկան հիւանդի վրա Պետերբուրգում պ. Պուտելովին յաջողվեց երկու անգամ տեսնել նոյն հնարքի շատ ներգործութիւնը։ Այս հնարքը, ասում է Պուտելով, արժանի է, որ ենթարկվի ինչպէս քիմիական հետազօտութեանը, նոյնպէս փորձերի՝ կենդանիների և հիւանդների վրա։

Ցանկալի կը լիներ շատ, կաւելացնենք մեզանից, որ Թիֆլիսում, որտեղ ամառը շատ մանուկներ են մահի զոհ դառնում հասարակ թէ արիւնախառն թանչքից, բժշկները փորձէին այս հնարքը և հաղորդէին իրանց նկատողութիւնը։

Բժիշկ Միրիմանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սանահնից մեզ հաղորդում են, որ երկու տարի է Սանահնի ուսումնարանը փակված է վանահօր թուլութեան պատճառով։ Իշխանուհի Քալի Արղութեանց թէպէտ նուիրում է ուսումնարանին, իբրև ուսուցչի ծախս տարեկան 200 ռուբլ, բայց վանահայրը զլանում է վանքի փողից աւելացնել 100 ռուբլ, որպէս զի կարելի լինէր մի օրինաւոր ուսուցիչ հրաւիրել։ Գոնէ Հաղպատի վանահայր Յովսէփ վարդապետ Խարազեանից օրինակ առնէր Սանահնի վանահայրը, աւելացնում է մեր թղթակիցը, որ ամեն ջանք է թափում իր ուսումնարանը պայծառացնելու։

—

Մեզ գրում են հետևեալը։ «Վերջին պատերազմից յետոյ 1878 թ-ից սկսած մինչև այժմ, զանազան տեղերից գաղթած են Արդահան 80 տնից աւելի հայեր, որոնք պարապում են արհեստներով և վաճառականութեամբ, այնպէս որ դոքա ամենքը իրանց համար մշտական գործ ունենալով, այլ ևս չեն վերադառնալու իրանց հայրենիքը։ Ահա չորս տարի է, որ այդ ժողովուրդը ոչ քահանայ, ոչ եկեղեցի և ոչ ուսումնարան ունի։ Քանի անգամ դիմել են Ղարսի առաջնորդին խնդիրներով և վերջապէս ուղարկել են աղերսագրեր Ս. Էջմիածին որ չուտով նշանակեն նրանց համար մի բարեկիրթ քահանայ, որ հոգ տանի եկեղեցու և ուսումնարանի համար, իսկ ժողովուրդը պատրաստ է իր հաշուով ուսումնարանի շինութիւնը կառուցանել և ունի դրա համար պատրաստ դրամ 3,000 ռուբլ։ Բայց հոգևոր իշխանութիւնը բոլորովին անտարբեր է մնում դէպի այդ անհրաժեշտ ազգային գործը և չորս տարվայ ընթացքում ոչինչ կարգադրութիւն չէ արել այդ մասին, այն ինչ դա, առանց ժողովրդի խնդիրների, Էջմիածնի պարտաւորութիւնը կը լիներ։ Այդ պատճառով Արդահանի հայերից շատերը իրանց ննջեցեալներին թաղում են առանց քահանայի, մկրտում են երեխաներին միմիայն աղօթք անելով Աստուծուն նորածին մանուկի համար, հաղորդութիւն են ընդունում իրանց մէջ աղօթք անելուց յետոյ, փոքր ինչ հացով և գինով։ Ահա հետևանքներ հոգևոր իշխանութեան անհոգութեան և իր պարտաւորութեան չը կատարելուն։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Ահա քանի տարի է արդէն որ Նուխու հոգևոր կառավարութեան մէջ ծառայում են տէր Սիմէոն, տէր Մովսէս և քարտուղար Կարապետ։ Դոքա իրանց բազմաթիւ գեղծումներով յայտնի են արդէն Ղարաբաղի կօնսիստորիային, բայց նրանց փոխելու համար ոչինչ կարգադրութիւն չէ լինում։ Այժմ երբ Նուխում յաջորդ չը կայ, ամենայն ինչ այդ երեքի կամայականութիւնից է կախված։ Ժողովրդի համբերութեան չափը արդէն անցած է. նա միանգամայն յուսահատված, վերջին անգամ կամենում է իր բողոքը ներկայացնել հոգևոր բարձր իշխանութեանը, իսկ յետոյ ինչ կը լինի, եթէ այս անգամ էլ նրա ձայնը չը լսվի, — այդ դժուար է նախագուշակել։»

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷԹԻՑ հաղորդում են մեզ որ հարցաքննութիւնները, որոնք եղան յուլիսի սկզբներում այդ քաղաքի հայոց թէ արական և թէ իգական դպրոցում շատ անբաւարար էին։ Աշակերտները և աշակերտուհիները շատ թոյլ էին ամեն առարկաներից։ Ուսուցիչները վարվում էին աշակերտուհիների հետ, ինչպէս թշնամիների հետ, անզգաստ յարձակվելով նրանց վրա և մատաղ սերունդի հասկացողութեան համար անլուծելի հարցեր առաջարկելով, որ իրանք էլ, ինչպէս երևում է, չէին հասկանում։ Թղթակիցը աւելացնում է որ Նոր-Բայազէթի հայոց դպրոցների հոգաբարձութեան և ուսուցիչների մէջ մեծ թշնամութիւն է տիրում։ Այդ թշնամութեանը զոհ է գնում դպրոցների ամբողջ գոյութիւնը։

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքի երկսեռ դպրոցների մէջ հարցաքննութիւնները վերջացան յուլիսի սկզբներում։ Աշակերտները ամեն առարկաներից շատ թոյլ էին։

—

Յայտնում ենք, որ «Մշակի» մէջ չեն ընդունվում յայտարարութիւններ առանց այդ յայտարարութիւնների տպագրութեան փողը կանխիկ ստանալու։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Ձեր թղթակիցը ձեզ արդէն գրել է, որ Ամբրոսիոս Ռուբինեան վարդապետը այժմ այստեղ է։ Ահա երկու տարի է որ սա ամբողջ Ռուսաստանում փող է ժողովում իր երևակայեալ երկրագործական դպրոցի համար։ Ճշմարիտն ասեմ, ես էլ չեմ հաւատում որ իրագործվի նրա ուսումնարանը, նա, կարծում եմ, միայն առիթ է որոնում փող ժողովելու։ Նկատողութեան առէք որ նա դեռ վարդապետ է, իսկ ամեն մի վարդապետի իդէալը եպիսկոպոս դառնալն է։ Այսպէս 10—15 հազար ժողովելուց յետոյ, նա կը ձգտի եպիսկոպոսական դաւազանի, կերթայ Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրվելու, կը թողնի այնտեղ 5 մինչև 6 հազար ռուբլ և այնուհետև սուս ու փուս կիջնի Կ. Պօլիս։ Այնուհետև գնացէք ու նրանից հաշիւ պահանջեցէք։ Ձեզ կասեն որ այդ անկարելի է, չէ՞ որ հանգանակած գումարը պահվում է հոգաբարձուների՝ պ. պ. Մանթաշեանի և Յովհաննիսեանի մօտ։ Այդ ճշմարիտ է, բայց հոգաբարձութիւնը պահում է իր մօտ փողերը քանի որ չարունակվում է հանգանակութիւնը, իսկ հանգանակութիւնը վերջանալուց յետոյ, ինչպէս ասված էր «Փորձի» V տետրակի յաւելուածի մէջ 1879 թ-ին, դրամը կը յանձնվի ում հարկն է։ Ուրեմն վերջ ի վերջոյ փողը դարձեալ պիտի ընկնի Ռուբինեան հօր ձեռքը։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Ճեմարանի բարձր դասարանի աշակերտները անբաւական լինելով վարժապետների դասաւանութիւնից, դիմած են եղել գերապատիւ Անդրէաս եպիսկոպոսին խնդրելով տալ նրանց սեմինարիական կուրսի վկայական, որպէս զի եթէ հետևեալ տարին էլ նոյն վարժապետները մնան, նրանք ազատ լինեն թողուլ ճեմարանը. բայց սրբազանը անուշադիր է թողած եղել այդ խնդիրը, մինչև որ, վերջապէս աշակերտները հրաժարվեցին քննութիւն տալուց, պնդելով իրանց պահանջի վրա։ Ահա այս հիման վրա Վեհափառը Աղափիրեանց սրբազանին ուղարկեց Ռուսաստան ճեմարանական դասերի համար գիտական վարժապետներ հրաւիրելու։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

„Порядокъ“ լրագրի մէջ տպված է հետևեալ նամակը Բերլինից։

Բերլինի պահպանողականների աշխատանքները աջողութեամբ պսակվեցան տեղական լանդտագների անդամների ընտրութիւնների ժամանակ ու այդ աջողութիւնը այնքան նշանաւոր է, որ նրանով գրաւված է այժմ գերմանական ամբողջ մամուլը։ Առժամանակ այդպիսի ընտրութիւններ եղել են Բավարիայի և Սակսօնիայի մէջ և պէտք է լինեն Էլզաս-Լօտարինգիայի մէջ։ Առաջինի մէջ ընտրված են գրեթէ ամբողջապէս կղերականներ, իսկ երկրորդի մէջ այդպէս անուանված սակսօնական ազգասէր պահպանողականները։ Վերջապէս երրորդի մէջ ամոնօմիստների կուսակցութիւնը բոլորովին անհետացել է հորիզոնից. այդ կուսակցութեան անդամներից երկուսը հրապարակապէս յայտնեցին, որ նրանք բողոքների կողմն են անցնում, մնացածները հրաժարվեցան ընտրութիւններից, իսկ այդ կուսակցութեան ստեղծող գեներալ Մանտէյֆել պատրաստվում է հրաժարական տալ և, եթէ մինչև այժմ նա հրաժարական չէ տուել, դրա պատճառն այն է, որ Հոհենցոլերնների հին ծառայ լինելով նա չէ կամենում բացարձակ պատերազմ կառավարութեան գործողութիւնները, թէպէտ չէ էլ կամենում նրանց մասնակից լինել։ Նրա հրաժարականի մասին լուրերը դեռ չեն տպվել լրագրերի մէջ, բայց այնու ամենայնիւ նրանք ճիշդ են։ „Ես այլ ևս առաջվայ գործիչը չեմ,“ ասել է բարոն Մանտէյֆել, պատմելով իր բարեկամներից մէկին, որ նա անպատճառ կամենում է հրաժարվել իր պաշտօնից։ Եւ ճշմարիտ այնմարդը, որ իր նշանաբան է ընտրել „նոր վերքեր չը հասցնել, այլ հները դարմանել,“ այլ ևս չէ կարող Էլզաս-Լօտարինգիայի փոխարքայ լինել, քանի որ կառավարութիւնը իր պաշտօնական լրագրերների մէջ յայտնեց, թէ „բարոն Մանտէյֆել, վերքերի մասին խօսելով, ի նկատի ունէր այն վերքերը, որոնց հասցրեց Էլզաս-Լօտարինգիային Ֆրանսիան իր 200 ամեայ տիրապետութեամբ այդ երկիրների վրա և ոչ թէ Գերմանիայի հասցրած վերքերը։“ Դրանից յետոյ բարոն Մանտէյֆել մի քանի անգամ ճանապարհորդելով Բերլին համոզվեցաւ, որ ոչինչ չէ կարող անել և այժմ տեղը զիջանում է նրանց, որոնք աւելի համապատասխանում են նրա նախկին բարեկամ իշխան Բիսմարկի նպատակներին և մտադրութիւններին։

Բայց ես չը մեկնեցի, թէ ովքեր են „սակսօնական ազգասէր“ պահպանողականները և բաւարական կղերականները, որոնք նոյնպէս իրանց „բաւարական ազգասէր“ են անուանում։ Դրանք պարտիկուլիարիստներն են, այն մարդիկ, որոնք բացարձակ ընդդէմ են գերմանական միութեանը պրուսական կայսերութեան ձևով, որ կազմակերպել է 1866 և 1870 թուականներից յետոյ իշխան Բիսմարկ իր քաղաքականութեամբ։ Դրանք այն մարդիկն են, որոնց լրագիրները գերմանական կայսերութեան ստեղծելը „Աստուծոյ պատիժ“ անուանեցին։ Պէտք է նկատել, որ վերջին ժամանակներում իրան ազատամիտ ձևացնող բավարական կառավարութիւնը այնպէս փոփոխեց ընտրողական շրջանները, որ կղերականները պէտք է փոքրամասնութիւն կազմէին։ Գերմանական միութեան կողմնակիցները չափազանց զոհ էին, կարծելով, որ նրանց ատելի կղերականները կատարելապէս ոչնչացրած են Բավարիայի մէջ, զոհ էին մինչ այն ժամանակ, երբ իրականութիւնը նրանց ապացուցեց, որ կղերականները իսկապէս աւելի ուժեղ էին։ Պէտք է իմանալ, որ Սակսօնիայի մէջ պարտիկուլիարիստները բացի պալատական շրջաններից չէին երևում ոչ հասարակութեան և ոչ ժողովուրդի մէջ, որ հաշտվեցան ոչ թէ միայն գերմանական միութեան, այլ և պրուսական կայսերութեան մտքի հետ։ Դրա պատճառն այն է, որ այժմ Սակսօնիայի մէջ թագաւորող տունը համակրելի չէ ժողովրդի մէջ, իսկ թագաժառանգին, այժմեան ծերունի և անորդի թագաւորի եղբօրը, ժողովուրդը կատարելապէս ատում է։ Լայպցիգի մէջ, չը նայելով սոցիալական ուղղութեան զարգացմանը, Պրուսիայի հետ պետական միութիւն կազմելու միտքը չափազանց համակրելի էր։ Այդպէս էր տարիներ կէս սրանից առաջ, իսկ այժմ Լայպցիգը մնացած Սակսօնիայի հետ միասին ընտրում են իրանց ներկայացուցիչներ մի կողմից սոցիալ-դեմոկրատներին, իսկ միւս կողմից պարտիկուլիարիստներին։

Սրանք են իշխան Բիսմարկի ներքին քաղաքականութեան և պաշտօնական լրագրերների աշխատանքների պտուղները։ Ի հարկէ կայսերական և տեղական ընտրութիւնների մասին օրէնքների զանազանութիւնը կազդէ բայխստագի անդամների ընտրութեան վրա։ Ընդհանուր քուէարկութեան շնորհիւ բայխստագը աւելի շատ ազատամիտ անդամներ կունենայ, քան թէ տեղա-

կան լանդտագները։ Բայց այդ երկու ընտրութիւնների բնաւորութիւնը նոյնը կը մնայ, այսինքն լայխստագի մէջ „Bismark sans phrase“ (Բիսմարկ առանց դատողութեան) անունով մեծամասնութիւն չի կազմվի և հակակառավարչական տարրը չի թուլանայ, այլ ընդհակառակը աւելի զօրեղ կը լինի։

Մանր կառավարութիւնները, որոնք բընականաբար պարտիկուլիարիստներ են, ամեն բան անում են, որպէս զի իշխան Բիսմարկի ջանքերը այդպիսի հետևանք ունենան։ Օրինակ բավարական թագաւորը հրամայեց բոլոր աստիճանների պաշտօնական անձանցը չը միջամտել ընտրութիւններին, որ և է ճանապարհով չազդել ընտրողների վրա և ոչ ոքի թոյլ չը տալ այդպիսի ազդեցութիւն գործել։ Սակսօնական կառավարութիւնը ոչ թէ միայն չէ արգելում մանաւոր անձանց վարչական ճանապարհով արտաքսված բանտարների ընտանիքներին օգնութիւն հասցնել, նրանց դատաստանի չէ ենթարկում, այլ ընդհակառակը պաշտօնական և կիսապաշտօնական լրագիրների միջոցով հրաւիրում է հասարակութեանը օգնել այդպիսի ընտանիքներին, իսկ ինքը կառավարութիւնը օժանդակութիւն է տալիս իւրաքանչիւր կնոջը օրական 1 մարկ, իսկ երեխային 30—40 պֆէնիգ։ Ի հարկէ այդ օգնութիւնը աննշան է, համեմատելով այն բարիքների հետ, որ խոստանում է իշխան Բիսմարկի բանտարներին ապահովելու օրինագիծը, բայց հարկաւոր ժամանակ փոքր օգնութիւնն էլ մեծ նշանակութիւն ունի։ Բիսմարկի քաղաքականութեան նպատակն է ապագայում վարձատրել վիրաւորված բանտարներին, իսկ ներկայումս առողջներին հալածում է և անպատում։ Իսկ փոքր թագաւորները, իրանք էլ անպատուած լինելով, պաշտպանում են խեղճ բանտարներին և նրանց մէջ բարեկամութիւն է հաստատում և ատելութիւն դէպի ընդհանուր թշնամին։ Եւ այդ համերաշխութիւնը կայանում է ոչ թէ միայն բանտարների հետ, այլ նա անցնում է և զօրքերի կարգը, որոնց մէջ անբաւականների թիւը հետզհետէ շատանում է։ Դուք կը հարցնէք, թէ այդ ինչպէս է պատահում, քանի որ զօրքերը գերմանական կայսերութեան ամենասիրելի առարկան են կազմում, քանի որ նրանց համար գոհվում են ազգաբնակութեան շահերը։ Դրա պատճառները հետևեալներն են։ Զինուորները շատ լաւ են պահվում, բայց այն խիստ դիսցիպլինան, որին նրանք ենթարկված են, անտանելի է ոչ պրուսացի զինուորներին։ Իսկ ոչ-պրուսացի օֆիցերների համար, չը նայելով մեծ ռոճիկին և անսահման յարգանքին, փակված է զինուորական ընդարձակ ասպարէզը։ Նրանք կարող են հասնել մայորի կամ ընդապետի օգնականի աստիճանին, իսկ աւելի բարձր աստիճանները տուած են և արվում են միայն պրուսացի օֆիցերներին։ Բացի այդ հայրենիքի մէջ ապրելու անկարելութիւնը շատ վատ է ներգործում թէ օֆիցերների վրա և թէ հասարակ զինուորների վրա։ Իսկ հայրենիքի մէջ նրանց թոյլ չեն տալիս ապրել գօրքերի „ընդհանուր ոգին“ պահպանելու համար, այսինքն իսկապէս այն պատճառով, որ կառավարութիւնը շատ չէ հաւատում ոչ-պրուսացի օֆիցերներին։ Բացի այդ պրուսական օֆիցերները ծառայում են այլ գերմանական գունդերի մէջ, իսկ գերմանացի այլ օֆիցերները պրուսական գունդերի մէջ։

Բարձր հրամանատարութիւնը ամեն տեղ յանձնված է պրուսացի օֆիցերներին և ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, որովհետև ոչ պրուսացի օֆիցերները գնդապետի օգնականի աստիճանից աւելի հեռու չեն գնում։ Ճշմարիտ է, պրուսական զօրքերը թէ իրանց քանակութեամբ և թէ յատկութեամբ գերազանցում են գերմանական միւս փոքր պետութիւնների զօրքերին, իսկ պրուսացի հրամանատարները մեծ նշանակութիւն ունեն։ Կենսական փորձը ապացուցանում է, որ կասկածանքը անհաւատարմութիւն է ստեղծում և այդ պատճառով գերմանական այժմեան զօրքերը այլ ևս նրանք չեն, որոնք ջարդում էին աւստրիացիներին Սադովոյի մօտ և ֆրանսիացիներին Սեդանի և Գրավիլոտայի մօտ։ Գուցէ գերմանական զօրքերը գերազանցում են եւրոպական միւս պետութիւնների զօրքերին, բայց նրանք կորցրել են իրանց նախկին յատկութիւնները. սա մի իրողութիւն է, որ ժամանակով կարող է նշանաւոր հետևանքներ ունենալ։ Անհեաք չեն մնում և այնպիսի անցքեր, որ նորերումս պատահել են Բրաունշվեյգի մէջ։ Ծերունի դուքսը իր աստիճաններից մէկի ստանալու օրը տօնելու ժամանակ մի ճաշ տուեց ի պատիւ Բրաունշվեյգի օֆիցերների և հրաւիրեց նրանց, որոնք մնում էին Բրաունշվեյգի մէջ, իսկ պրուսական օֆիցերներին և նրանց թուում հրամանատար գեներալ Ֆոն-Շտեյնին նա չը հրաւիրեց։ Գեներալը չափազանց նեղացաւ, դուքսի վարմունքը մի ցոյց համարելով Պրուսիայի դէմ։ Նա խոկոյն հեռագրով Բերլինից հրահանգ է խնդրում, թէ այդ դէպքում նա ինչպէս պէտք է վարվի։ Նրան պատասխանում են. „դուք գեներալ էք և ինքներդ պէտք է իմանաք ձեր անելիքը։“ Գեներալ Ֆոն-Շտեյն հրամայեց զօրքերին հաւաքվելու եղանակը ածել հէնց այն րոպէին, երբ սկսվեցաւ դուքսի տան ճաշը և իսկոյն զօրախաղ նշանակեց։ Այդպիսով դուքսի պինուորական հիւրերը ստիպվեցան հեռանալ դուքսից և գնալ իրանց պաշտօնը կատարել։ Այդ վարմունքի համար գեներալը գովեստի արժանացաւ։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Բաղէշ, յունիսի 15

Օրերը կը սլանան, տարիները կանցնեն և հայ ժողովրդեան կացութիւնը փոփոխութիւն մը չը կրեր երբէք. երկու-երեք տարի է Ասիոյ հայը աչքերը Վոսփորի ափունքը սեւեռած բարենորոգմանց կը սպասէ և սակայն գեղեցիկ խոստմանց ծայներէն զատ դեռ ոչինչ գործադրութիւն չը տեսաւ։ Քնիչք (commisaire) բարենորոգմանց առա՛ջ առաքեալներ եղան. հայութիւն դիմումներ միայն տեսաւ, բարենորոգիչներու երես երբէք չտեսաւ։ Ամենեքեան կանգնեմ ենք հոս նոցա ապիկար գործունէութիւնը, որք կառավարութեան բարենորոգմանց մեռած կամքի մեռած պաշտօնեայներ միայն եղան։

Վերջին երկու-երեք տարիներու ընթացքը տեղացի հայութեան կախման կեանքի միջոց մ'եղաւ, և Պերլինի մի յօդուածը, կարծես, խայծ մ'ամրացուց հինգհարիւրամեայ թրքական չարութեանց կծութիւնը, որ թթուեցուցած է հայու սիրտ ու միտքը։ Երկու երեք տարի է, այն, պարզամիտ հայը չարունակ բարենորոգմանց կը սպասէ. թիւրքիոյ բարեմիտ դիտաւորութեանց հանդիսին կը սպասէ և սակայն ի զուր կը կարծէ հայը որ օձը չապրի հետ ընութիւնն ալ կը փոխէ, բայց իզուր։ Թիւրք խարդախութիւնը օրորք մ'եղաւ հայուն տղի մը նման օրորուիլ երկու—երեք տարի յուսոյ և յուսահատութեան մէջ, հաստատ հաւատք ունենալով որ թիւրքը մլչտ թիւրք է, և մահմետական բարենորոգում յաւիտանաւորած գլուխներու երևակայական պարզ թռիչք մը։...

Խօսքերս հաստատելու համար պէտք չունիմ ձեռնարկութեանց դիմելու. վերջին տարիներու անցքերը այնպիսի «հասարակ տեղիք» մ'են ուր անժխտելի փաստեր պահուած կան ստուգելու համար խօսքերս։ Ոհ, կարելի է լեռ մ'թէ թուել հոս մի ըստ միոջէ բոլոր այն կարևոր դէպքերը գոնէ, որպ ստուգութիւնը ցաւալի չարժառիթ մ'է հայոց համար թրքական բարենորոգմանց գաղափարը խարտ վանելու իրենց գլխէն։ Թիւրքը միշտ թիւր գաղափարներ կը տածէ հայերու մասին և թիւր ու ծեքածոյ միջոցներով կը կռուի նրա հետ։

Արդարութիւն չը կայ թիւրք իշխանութեան չրջանի մէջ, անիրաւութիւնը այն սահմանագիծն է որ թիւրք կառավարութեան չրջանը կը պատէ։ պաշտօնեայք գլխովին հակառակ են արդարութեան. օրէնք, օրինագիրք մեռած տառեր են. կառավարութեան գործունէութեան չարժառիթը մոլեռանդութիւն ու կաշառքն է. դատեր, դատաստանները, ամեն ինչ դուրանի ու ոսկւոյ դուռ թեղադրութիւններ են։ Թող առաջնորդ ու տեղացին, թող ռամիկ ու գիտունը բոզքեն, արդարութիւնը այս երկրի անդարձ աքսորեալն է. գեղծում, գեղծում, ամենուրեք գեղծում, գեղծում որով ստգորուած է այս երկիր. գեղծում, թէպէտ բարենորոգմանց պաշտօնեայք դիշերաշրջիկի խաղ մը խաղան այս երկրի մէջ։

Բարենորոգմանց պաշտօնեայ! ըսեմ արդեօք բարենորոգմանց խաղածաղիկ. իրենց ձայն ու համբաւը իրենց գործերէն մեծ եղաւ. իրենց բացակայութիւնը աւելի չահաւոր էր քան ներկայութիւնը. տեղական վայրագ խաժամուժը մեծ այժ գտաւ նոցա թուլութեան մէջ յառաջ տանելու իր չարութիւնը, դիտելով որ նոքա և ոչ մի իրական հեղինակութիւն ունին ճնշելու իրենց յոռի ընթացքը։

Ասիոյ լեռները ամեն ժամանակէ աւելի այսօր ականատես կը լինին անլսոր օճիրներու։ երբ լեռնորդ թագաւորներ առիթ կուտենան հոր և սուր գործածելու իրենց ծակամուտներու մէջ վերցնելու խեղճ հայու մը կեանք. երբ լեռնորդ թագաւորներ ամեն ժամանակէ աւելի այսօր կը վիստան իրենց որջերու մէջ։ Բարենորոգմունք կը յետաձգուին ու կը խափանուին, չարութիւնք ու աւազակութիւնք կը կաղմակերպին ու կը յառաջադիմեն։

Խօսքերս չը հետևիր ըսել թէ սարերու ու ձորերու մէջ միայն գողութիւն ու աւազակութիւն մուտ գտած են, ոչ, յափշտակութեան ու անիրաւութեան սահմանը այնչափ նեղ չէ. ինչ որ կը լինի բացօթեայ տեղ մը, նոյնը կը լինի և գիւղի ու քաղաքի մը չուրջ, նոյնը կը լինի և կառավարութեան խոր անկիւնը, հոն ուր իրաւունքը իր վերջին ապաստանարանը պէտք էր գտնել։ Ինչ կուզեն թող ըսեն ուրիշներ, ես կը սեմ որ այս վերջին մի քանի տարիներու մէջ եղած ամեն ինչ ձև են, ամեն ինչ երեոյթ ու ցնորք. այս վերջին տարիներու թիւրք գործառնութիւնը թիւրք կառավարութեան դէչ կատակն է, որոյ առարկայ եղած է հայութիւնը։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«—Մասիսի մէջ կարդում ենք։ «Նինուէի Ասորւոց դեր. Դիոնիսիոս Պընամ արքեպիսկոպոսն յատուկ նամակ մը գրած էր առ. ս. պատրիարքն, խնդրելով որ ետ առնու իր հրաժարականն և հաճի դարձեալ չարունակել պատրիարքական պաշտօնն։—

—«Մասիս» հաղորդում է հետեւեալը։ «Բ. Դրնէն ազգ. պատրիարքարան զրկված գիր մը ծանուցանելով թէ ամեն. Խրիմեան սրբազանի և գեր. Գարեգին վարդապետի Վան մնալը դէչ հետևանաց պատճառ կրնայ լինել, կը պահանջէ որ այս երկու եկեղեցականները Կ. Պոլիս կանչվին։ Ազգ. պատրիարքարանը այդ մասին իր ուղեցած դիտաւորութիւնները Բ. Դրան ուշադրութեան ներկայացաց։»

—«Голосъ» լրագրին Կ. Պոլսից գրում են որ չէյխ Իսլամը Կ. Պոլիս գալուն պէս մեծ պատուով ընդունվեցաւ թիւրք կառավարութենից։ Փոխանակ այդ անպիտանին պատժելու,— որ այդքան վնաս տուեց Հայաստանին, թիւրք մինիստրները ներկայանում էին Նրան և Նրա ձեռքն էին համբուրում, որովհետև նա չէչ էր, այսինքն հոգևոր անձնաւորութիւն։ Դրանից յետոյ ինչ յոյս կարելի է դնել թիւրքիայի վրա հայոց խնդրի լուծելու վերաբերութեամբ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին չրջանի արժէ 96 ր., երկրորդ 94 ր. 62 կ., երրորդ 94 ր. 75½ կ., չորրորդ 94 ր. 25 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմակը արժէ 225 ր. 25., երկրորդ 223 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 91 ր. 62½ կ., երկրորդ 91 ր. 62½ կ., երրորդ 91 ր. 75½ կ., ոսկի 7 ր. 80 կ.։ Ռուսաց 1 ռուբլ 1 օնդօնի վրա արժէ 25,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 219 մարկ 75 պֆ.։ Փարիզի վրա արժէ 271 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի արամադրութիւնը ամուր է։

„ՄՇԱԿԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԲԻԼՎԱՐ. Մ. Ց. Աւելի լաւ չէր լինի եթէ Յարիցինից ուղարկված փողերը Նուիրատուները Նուիրէին յոգուտ դպրոցի, քան թէ նոր եկեղեցի կառուցանելու։ Երբ կը հասկանան հայերը Քրիստոսի այն խօսքը, թէ «Որտեղ երեքը ձեզանից հաւաքված կը լինեք, այնտեղ ես էլ ձեր մէջ կը լինեմ։» Աղօթելու համար կարելի է ամեն տեղ հաւաքվել, հարկաւոր չէ դրա համար առանձին սհագին փողեր ծախսել մի գիւղի մէջ մի մեծ եկեղեցի կառուցանելու համար։ Եկեղեցին կարող է տեղաւորվել նոյն իսկ դպրոցի դահլիճում։ Երբ կը հասկանան հայերը որ կարելի է իւրաքանչիւր գիւղական ուսումնարանի սենեակներից մինի մէջ տեղաւորել եկեղեցին։ Եթէ չէք կամենում հետևել գերմանացիների և ամերիկացիների օրինակին, որոնց դպրոցների դահլիճը կիրակի օրերը եկեղեցի է դառնում, գոնէ նայեցէք ձեր չորս կողմը և կը տեսնէք որ մեր պետական իւրաքանչիւր մի դպրոցի սենեակներից մինը նոյն իսկ մեր քաղաքներում, յատկացրած է լինում եկեղեցուն։ Հայերը, ընդհակառակն գործ են դնում սհագին գումարներ քարաշէն եկեղեցիներ կառուցանելու վրա, նոյն իսկ գիւղում, իսկ ոչինչ փող չէ մնում դպրոցներ պահպանելու համար, և դպրոցների չինութիւնները ախոռների նման են։ Աւելի լաւ չէր լինի եղած գումարները գործ դնելու մեծ, չքեղ, ընդարձակ, քարաշէն, հոյակապ, յարմար դպրոցներ կառուցանելու վրա, և նոյն իսկ դպրոցի ընդարձակ սենեակներից մինը յատկացնել եկեղեցուն, որ մի և նոյն ժամանակ կը ծառայէ ամբողջ գիւղին էլ որպէս գիւղական եկեղեցի, ձմեռը տաքացրած կը լինի և ժողովուրդը կընտելանայ միացնել եկեղեցու գաղափարը ուսումնարանի գաղափարի հետ և կերթայ կիրակի օրերը այնտեղ աղօթելու, որտեղ ամբողջ չարաթը նրա զաւակները ուսում էին առնում մայրենի լեզուով։ Ճշմարիտ, լաւ մտածենք. որքան մենք դեռ տգէտ և նախապաշարված ենք, և որքան մենք ինքներս մեզ վնասում ենք ամեն կողմից մեր տգիտութեամբ և նախապաշարմունքով։ Եթէ ընդունենք Քրիստոսի խօսքը, պէտք է ընդունենք և այն որ առանձին եկեղեցիներն էլ շատ հարկաւոր չեն, որովհետև որտեղ մի խումբ հաւատացեալներ է հաւաքվում, այնտեղ էլ Քրիստոսը նրանց մէջ է, ուրեմն այնտեղ եկեղեցի է։ Եկեղեցին հաւատացեալների ժողով է, թէկուզ առանց բարաշէն չինութեան, իսկ հայերը կարծում են, որ եկեղեցին անպատճառ մի քարաշէն, հոյակապ չինութիւն պէտք է լինի, թէկուզ իրանք դուրկ են հաւատից։

—ՂԶԼԱՐ. Երեք աստղ։ Ձեր նամակից մի երկտող լուր հանեցինք։ Խնդրում ենք ուրիշ անգամ մի քիչ աւելի օրինաւոր թանաք և թուղթ գնել։ Նամակից բան չէր հասկացվում, որովհետև մէկ երեսի վրա գրածը միւս երեսից էր կարդացվում։

—ԹԻՖԼԻՍ. Կ. Մատենանց։ Զարմէ տպել, որովհետև ձեր պատասխանի համը հայհոյական բառերի մէջն է, իսկ այժմեան ցենզորը այդ բոլորը կը հանէ և ձեր նամակից բան չի մնայ։

—ԻԳԴԻՐ. Զ. Դուք մեզ կը խղճայիք, եթէ իմանայիք որքան մենք ամեն օր նամակներ ենք ստանում, որոնք սկսվում են այս խօսքերով. «Կարծես հայն վիճակված է»։

—ԲԱԳՈՒ. Ա. Ինչի չը տպեցինք «Մարդասիրական ընկերութեան» 17-րդ տարեդարձը, թէկուզ իր ժամանակին մի քանի նամակներ այդ մասին ստացանք,— թող ինքն ընկերութիւնը հասկանայ։

—ՔՈՒԹԱՅԻՍ. Մ. Մեր զամբիւղը շատով կը դառնայ մի հայոց երկսեռ դպրոց, այնքան շատ են դիզվում նրա մէջ նամակներ դպրոցների, հոգաբարձուների, ուսուցիչների, տեսուչների, հարցաքննութիւնների և այլն սրանց նման բաների մասին։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ